ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2016 թվական, մայիսի 24, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» ՀԿ գործադիր տնօրեն

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Բագրատ Ղազինյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության պետ (ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Ս. Քրմոյանի փոխարեն)

Էլեկտ. 121216-16
13 06 16

Սամվել Սողոմոնյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ (ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տ. Սահակյանի փոխարեն)
Ալբերտ Բաբայան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ (ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Ս. Ավետիսյանի փոխարեն)
Սրապիոն Առաքելյան	Թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Հ. Դանիելյանի փոխարեն)
Հասմիկ Ջհանգիրյան	Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Շ. Մկրտչյանի փոխարեն)

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Նարինե Բալայան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
Արմեն Եղիազարյան	«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Արման Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Արա Մկրտչյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության աշխատանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության բաժնի պետ

Սիրանուշ Զաքարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Գայանե Մանուկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Լաուրա Հակոբյան	Բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ
Միքայել Փիլիպոսյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Էլլադա Մելքումյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Սերգեյ Ավետիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Համլետ Դանիելյան	Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության

նախագահ

Շմավոն Մկրտչյան — Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2015 թվականին աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում: Տեսչության գործառույթների բարելավմանն ուղղված սոցիալական գործընկերների համատեղ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը, ԱՄԿ տեխնիկական և փորձագիտական աջակցությամբ:**
2. **Հայաստանի գործատուների հանրապետական միության Աշխատանքի միջազգային կազմակերպության /ԱՄԿ/ հետ համատեղ իրականացված «Նպաստավոր գործարար միջավայր կայուն ձեռնարկությունների համար» վերլուծության արդյունքների կոնֆերանսում քննարկման ընթացքում արված առաջարկությունների օգտագործումը հետագա բարեփոխումների ընթացքում:**
3. **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:**
4. **Այլ հարցեր:**

Նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Մինչև օրակարգի հարցերին անդրադառնալը, Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը ներկայացրեց հետևյալ տեղեկատվությունը.

Նշվեց, որ ինչպես հայտնի է յուրաքանչյուր տարի Ժնևում տեղի է ունենում ԱՄԿ համաժողովը և ցանկություն հայտնող բոլոր երկրները մասնակցում են վերջինիս: Համաժողովում ձայնի իրավունքից օգտվելու համար երկրները պետք է մասնակցեն եռակողմ կազմով: Նշվեց, որ 2016 թվականի Համաժողովին մասնակցելու վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշումն արդեն ընդունված է և Հայաստանի Հանրապետությունը կմասնակցի եռակողմ կազմով:

Կողմերին տեղեկացվեց, որ ԱՄԿ գլխավոր տնօրենից նամակ-հրավեր է ստացվել մասնակցելու ԱՄԿ «Աշխատանքի ապագան» նախաձեռնությանը: Տեղեկատվությունը փոխանցվել է նաև 2 կողմերին՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիային և Հայաստանի գործատուների հանրապետական միությանը: Նշվեց նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ԱՄԿ-ին ուղղված իր պատասխան նամակում ողջունել է այդ նախաձեռնությունը և պատրաստակամություն հայտնել ՀՀ անունից միանալու վերջինիս: ԱՄԿ-ն իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու այն երկրկներին, որոնք կմիանան այդ նախաձեռնությանն ու կներկայացնեն իրենց առաջարկությունները: Նախարարի

կողմից նշվեց, որ իր կարծիքով Հայաստանի Հանրապետությունը ևս սոցիալական գործընկերների հետ միասին կարող է ներկայացնել համապատասխան ծրագրի առաջարկ: Նախարարը հույս հայտնեց, որ նաև այցելության ընթացքում սոցիալական գործընկերները կօգտվեն այդ հնարավությունից՝ կոնկրետ առաջարկներ ներկայացնելու և դիրքորոշում հայտնելու համար:

Այնուհետև ըստ հերթականության ներկայացվեցին և քննարկվեցին օրակարգի հարցերը:

1. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2015 թվականին աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում: Տեսչության գործառույթների բարելավմանն ուղղված սոցիալական գործընկերների համատեղ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը, ԱՄԿ տեխնիկական և փորձագիտական աջակցությամբ:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության աշխատանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության բաժնի պետ Ա. Մկրտչյանը:

Նշվեց, որ ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կանոնադրության 7-րդ կետով որպես տեսչության նպատակներ և խնդիրներ էին սահմանվել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության ապահովումը, աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման միջոցառումների կազմակերպումը, աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային իրավունքների և ազատությունների պահպանման ու պաշտպանության ապահովումը՝ ներառյալ աշխատանքի անվտանգ պայմանների իրավունքը:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել և 2015 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Աշխատանքի պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՕ-256-Ն ՀՀ օրենքը, որից հետո ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 572-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշման մեջ: Մասնավորապես, որպես տեսչության նպատակներ և խնդիրներ են սահմանվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության ապահովումը, աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման միջոցառումների կազմակերպումը, աշխատանքի անվտանգ պայմանների իրավունքի ապահովումը:

Որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել կանոնադրությամբ տեսչությանը վերապահված մի շարք գործառույթները:

Վերը նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2015 թվականի ընթացքում տեսչությունը հսկողություն և վերահսկողություն է իրականացրել ՀՀ աշխատանքային

օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ.

1. տեսչության կողմից իրականացված թեմատիկ ստուգումներից թվով 72-ում, որպես ստուգման հարցեր, ընդգրկվել են ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 11-ի N 1486-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթի՝ աշխատողների անվտանգությանը և առողջությանը վերաբերվող հարցերը,

2. աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի հաշվառման և քննման՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի պահպանման և օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման ենթակա գումարների՝ ժամանակին վճարման նկատմամբ հսկողության և վերահսկողության նպատակով տեսչության կողմից հարուցվել են թվով 11 վարչական վարույթներ: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել են վարչական ակտեր՝ խախտումները վերացնելու վերաբերյալ գրավոր առաջադրանք տալու մասին կարգադրագրեր:

Տեսչության գործառույթների սահմանափակման հետևանքով աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ անձանցից ստացված թվով 36 դիմումներ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան վերադարձվել են դիմողներին:

Տեսչության գործառույթների բարելավմանն ուղղված սոցիալական գործընկերների, ԱՄԿ հետ համատեղ աշխատանքների իրականացման վերաբերյալ նախանշվեցին համագործակցության հետևյալ ուղղությունները.

1. փորձագիտական խորհրդատվությունների, ինչպես նաև առաջարկությունների ներկայացում՝ միջազգային չափորոշիչների վավերացման և կիրարկման անհրաժեշտության վերաբերյալ, մասնավորապես, դեռևս ՀՀ կողմից չվավերացված, սակայն միջազգային չափանիշներին աշխատատեղերի համապատասխանեցման (աշխատանքի պայմաններ, աշխատողների անվտանգություն և առողջություն) տեսանկյունից արդիական միջազգային իրավական ակտերի վերաբերյալ, օրինակ ԱՄԿ 155-րդ, 187-րդ, 184-րդ կոնվենցիաներ,

2. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի կիրարկման հստակեցման և կատարելագործման վերաբերյալ ԱՄԿ կողմից փորձագիտական խորհրդատվությունների, ինչպես նաև առաջարկությունների ներկայացում՝ ԱՄԿ կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության հանձնառությունների կիրարկման կատարելագործման ուղղությամբ աշխատանքի տեսչության համակարգի կառուցվածքի, լիազորությունների շրջանակների հստակեցման վերաբերյալ, հատկապես աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման ասպեկտներով, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող պետական ծառայողների (նախկին աշխատանքի պետական տեսուչների) լիազորությունների շրջանակների վերաբերյալ,

3. փորձագիտական խորհրդատվությունների, ինչպես նաև առաջարկությունների ներկայացում՝ աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման նորմերի, կանոնների, ինչպես նաև աշխատանքի անընդունելի ձևերում ներգրավված լինելուց աշխատողների պաշտպանության բնագավառում իրավական ակտերի մշակման, արդիականացման, ներդրման անհրաժեշտության վերաբերյալ, այդ նախագծերի մշակմանը ԱՄԿ կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում տեխնիկական աջակցության տրամադրում,

4. ԱՄԿ, ինչպես նաև սոցիալական գործընկերների կողմից իրականացվող ծրագրերով աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրառման ուղղությամբ վերահսկողության լիազորություններով օժտված մասնագետների համար վերապատրաստումների, սեմինարների կազմակերպում՝

միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման, միջազգային լավագույն փորձի յուրացման և աշխատանքային գործունեության ընթացքում արդյունավետորեն կիրառելու նպատակով, այդ մասնագետների տեսական և գործնական վերապատրաստումների կազմակերպում և իրականացում արտերկրում,

5. աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման վերահսկողություն իրականացնող մասնագետների լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ տեսչությանը տեխնիկական աջակցության ցուցաբերում (տեխնիկական, գործիքային և ծրագրային միջոցներ):

Զեկուցումից հետո ներկայացվեցին կարծիքներ և հարցեր՝ տեսչության դերի և գործառույթների վերաբերյալ, ինչպես նաև ներկաների կողմից հնչեցվեցին մտահոգություններ՝ տեսչության գործառույթների շրջանակի նեղացման առումով:

Մասնավորապես Բ. Խառատյանի կողմից նշվեց, որ ստեղծված պայմաններում տեսչության իրավասությունները բավականին նեղացել են և չեն համապատասխանում ՀՀ կողմից վավերացված ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջներին: Հարց ուղղվեց զեկուցողին, թե որպես նշված հարցերի հետ անմիջականորեն կապված անձ ինչ կարծիք ունի այս ամենի վերաբերյալ:

Ա. Մկրտչյանի կողմից նշվեց, որ իսկապես իրականությունն այն է, որ ԱՄԿ թիվ 81 կոնվենցիան նախատեսում է աշխատանքային օրենսդրության պետական ամբողջական վերահսկողության իրականացում, մինչդեռ ստեղծված իրավիճակում պետական վերահսկողություն նախատեսվում է միայն աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մասով: Նման պարագայում, երբ աշխատանքային իրավունքների մնացած մասով պաշտպանությունը թողնվում է դատարաններին, շատ դեպքերում ստեղծվում է իրավիճակ, երբ մարդիկ հիմնականում ֆինանսական պատճառներով, դատական քաշքշուկներից խուսափելու պատճառով չեն դիմում դատարաններ և չեն կարողանում վերականգնել իրենց աշխատանքային խախտված իրավունքները:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ իր կարծիքով այս պարագայում շատ լայն դաշտ է ստեղծվում արհմիությունների գործունեության համար: Հանձնաժողովի նախագահը նշեց, որ այս իմաստով կարելի է համատեղ քննարկել թե ինչ մեխանիզմներ, գործիքակազմ կարելի է ներդնել, որպեսզի այն ամբողջ գործառույթները, որոնք նախկինում վարչական մարմնին էին վերապահված և վարչական մարմնի միջոցով էին իրականացվում (այժմ օրենսդարական փոփոխությունների արդյունքում վարչական մարմնի կողմից չի իրականացվում) ավելի շատ այդ բացը լրացվի աշխատողների ներկայացուցիչների կողմից: Այսինքն, հարկավոր է մտածել համապատասխան գործիքակազմ ձևավորելու և կիրառելու ուղղությամբ:

Հանձնաժողովի նախագահի կողմից հնչեցված տեսակետի հետ համաձայնվելով Բ. Խառատյանը միաժամանակ նշեց, որ ԱՄԿ թիվ 81 կոնվենցիան սահմանում է աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում հենց պետության պարտականությունները՝ հաշվի առնելով, որ կազմակերպությունը կարող է ունենալ արհմիություն կամ ոչ, աշխատողը կարող է լինել արհմիության անդամ, կամ ոչ: Վերջինս առաջարկեց Հանձնաժողովի կողմից առաջարկություն ներկայացնել համապատասխան մարմնին այն մասին, որ այն

գործառույթները, որոնցով այսօր օժտված է ՀՀ առողջապահական պետական տեսչությունը ընդլայնվեն և այն ամենը, ինչը ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայով ամրագրված է որպես պետության գործառույթ իրականացնի ներկայումս գործող ՀՀ առողջապահական պետական տեսչությունը:

Ա. Մկրտչյանը ևս նշեց, որ ՀՀ-ի կողմից վավերացված ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայում ամրագրված են աշխատանքային իրավունքների պաշտպանության պետական վերահսկողության շրջանակները: Փորձը ցույց է տալիս, որ գործատուների համար վարչական լծակների կիրառման արդյունքում է, որ հնարավորինս պաշտպանվում են աշխատողների աշխատանքային իրավունքները, այսինքն վարչականն այս դեպքում ամենագործուն մեխանիզմն է:

Ս. Սողոմոնյանի կարծիքով միգուցե երբեմն վարչարարությունը հնարավոր է, որ նվազ արդյունավետ է, քան ուժեղ ու կայացած արհմիությունը: Սակայն, ինչպես հայտնի է, ներկայումս արհեստակցական կազմակերպությունները Հայաստանում չունեն բավարար ներուժ: Այս պահին ստացվում է, որ ոլորտում վարչարարությունը հանված է, իսկ դրան փոխարինող ուժը չկա: Արդյունքում ոլորտում առկա է բաց և աշխատողները փաստացի զրկված են իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունից:

Լսելով հնչեցված կարծիքներն ու դիտարկումները Հանձնաժողովի նախագահն առաջարկեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրում կա տեսչական բարեփոխումների գործընթացն համակարգող մարմին՝ Տեսչական բարեփոխումներն իրականացնող խորհուրդ, քննարկվող հարցին անդրադառնալ այդ մարմնի գործառույթների շրջանակներում, այսինքն՝ հարցերը տանել քննարկման այն հարթակ, որտեղ այսօր այդ խնդիրները քննարկվում են: Առաջարկվեց տեսչության գործառույթների առնչությամբ քննարկված հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ձևավորել կոնկրետ մոտեցումներ, քննարկել դրանք, ներկայացնել Տեսչական բարեփոխումների խմբին՝ քննարկումների արդյունքում ըստ այդմ հարկ եղած դեպքում աշխատանքներին ներգրավելով նաև ԱՄԿ փորձագետների:

Հանձնաժողովի նախագահի վերոնշյալ առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի անդամների կողմից:

Ս. Սողոմոնյանի կողմից նշվեց, որ ավելի ճիշտ կլինի վերոնշյալ առաջարկությունները ՀՀ առողջապահական պետական տեսչության կողմից գրավոր ձևակերպվեն և ներկայացվեն Հանձնաժողովին:

Գ. Մակարյանը, անդրադառնալով Ա. Մկրտչյանի զեկույցում վկայակոչված ԱՄԿ թիվ 155-րդ, 187-րդ, 184-րդ կոնվենցիաների՝ ՀՀ-ի կողմից վավերացման հարցին, նշեց, որ ներկայումս ՀՀ-ն բավական պատրաստվածություն ունի ԱՄԿ որոշ կոնվենցիաների վավերացման համար, սակայն այդ ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվում: Վերջինիս կարծիքով սոցիալական գործընկերության կողմերը ժնև այցելության ընթացքում ԱՄԿ գլխավոր տնօրենի հետ կարող են քննարկել ԱՄԿ-ի հետ ՀՀ-ում ԱՄԿ կոնվենցիաների վավերացման պատրաստվածության աստիճանի գնահատման վերլուծություններ կատարելու հարցը: Ձևավորված մասնագիտական խմբի կողմից համապատասխան հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում հնարավոր կլինի գնահատել իրավիճակը՝ ԱՄԿ այլ կոնվենցիաներ վավերացնելու համար:

ԱՄԿ թիվ 155-րդ, 187-րդ, 184-րդ կոնվենցիաների վավերացման հարցը կարևորվեց նաև Բ. Խառատյանի կողմից և առաջարկվեց այն ներառել Հանձնաժողովի որոշման մեջ:

Գ. Մակարյանի և Բ. Խառատյանի կողմից հնչեցված առաջարկություններն ընդունելի համարվեցին Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից: Հանձնաժողովի նախագահը նշեց, որ ԱՄԿ գլխավոր տնօրենը իր նամակում (ինչի մասին խոսվեց մինչև նիստի օրակարգի հարցերին անդրադառնալը) հորդորում է ներկայացնել առաջարկություններ, որոնց շրջանակներում ԱՄԿ-ն աջակցություն կցուցաբերի երկրում սոցիալական գործընկերության համակարգի հետ կապված և ընդհանրապես աշխատանքի ապագան նախաձեռնության շրջանակներում կոնկրետ միջոցառումներ իրականացնելու համար: Այս առումով Ա. Ասատրյանն առաջարկեց կողմերին, որ վերջիններս ձևավորեն առաջարկություններ, որոնք համատեղ կքննարկվեն մինչև Ժնև մեկնելը՝ տեղում միասնական մոտեցումներ ներկայացնելու համար: Ա. Ասատրյանը կարևորեց իրավիճակային վերլուծություններ իրականացնելու, երկրի պատրաստվածության աստիճանը գնահատելու առաջարկությունը:

Վերոնշյալ քննարկումների արդյունքում օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

1.1. Ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը:

1.2. ՀՀ առողջապահական պետական տեսչությունը ներկայացնի առաջարկություններ քննարկված հարցերի վերաբերյալ, որը Հանձնաժողովի քարտուղարության միջոցով կտրամադրվի Հանձնաժողովի կողմերին և վերջիններիս առաջարկությունների հիման վրա լրամշակվելուց հետո, ձևավորված ամբողջական առաջարկությունները կներկայացվեն Տեսչական բարեփոխումների խմբին:

1.3. Ժնև կատարվելիք այցելության ընթացքում ԱՄԿ գլխավոր տնօրենի հետ քննարկել ԱՄԿ-ի հետ ՀՀ-ում ԱՄԿ կոնվենցիաների վավերացման պատրաստվածության աստիճանի գնահատման և իրավիճակային վերլուծություններ կատարելու հարցը:

<u>2.</u> Հայաստանի գործատուների հանրապետական միության Աշխատանքի միջազգային կազմակերպության /ԱՄԿ/ հետ համատեղ իրականացված «Նպաստավոր գործարար միջավայր կայուն ձեռնարկությունների համար» վերլուծության արդյունքների կոնֆերանսում քննարկման ընթացքում արված առաջարկությունների օգտագործումը հետագա բարեփոխումների ընթացքում:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գ. Մակարյանը: Նշվեց, որ աշխատանքն իրականացվել է ԱՄԿ-ի հետ համատեղ: Սկզբում ֆոկուս խմբեր են անցկացվել տնտեսության երեք գերակա ոլորտներում և հետո մեկ ֆոկուս խումբ էլ անցկացվել է փակված ընկերությունների մասով: Այնուհետև 300 ձեռնարկության շրջանում ԱՄԿ-ի մեթոդաբանությամբ իրականացվել է բազմակողմանի վերլուծություն: Հարցաշարը պարունակում էր մոտ 120 հարց: Աշխատանքներն իրականացվել են մի քանի ամսվա ընթացքում և ամփոփվել 2016թ. փետրվարին կազմակերպված կոնֆերանսով:

Նշվեց, որ այն ժամանակ, երբ Գայ Ռայդերը դարձավ ԱՄԿ գլխավոր տնօրեն, առաջ քաշվեց թեզ, որով նախատեսվում էր ուսումնասիրել ձեռնարկությունների կայուն զարգացման համար նպաստավոր միջավայրը, ինչպես նաև դասակարգել այն հիմնական խոչընդոտները,

որոնք խանգարում են կազմակերպությունների կայուն զարգացմանը, քանի որ հարցն անմիջապես վերաբերում էր աղքատության հաղթահարմանը, զբաղվածության խթանմանը և այլն:

Մինչև օրս ԱՄԿ-ն նմանատիպ աշխատանքներ է իրականացրել մոտ 40 երկրներում: Այդ աշխատանքները նույնպես ներկայացվել են կոնֆերանսում. մասնավորապես ներկայացվել են հինգ երկրների՝ Մակեդոնիա, Խորվաթիա, Լատվիա, Վրաստան, Հայաստան համեմատական վերլուծությունները:

Իրականացված վերլուծության արդյունքում բացահայտվել են Հայաստանում նպաստավոր գործարար միջավայրի համար կայուն ձեռնարկությունների զարգացման հինգ առաջնային խոչընդոտ հանդիսացող ոլորտներ.

1. Կրթություն, վերապատրաստում և ուսուցում ամբողջ կյանքի ընթացքում.
2. Ֆինանսավորման հասանելիություն.
3. Արդար մրցակցություն և ստվերային տնտեսություն.
4. Արդյունավետ կառավարում և դրա հետ կապված կոռուպցիան.
5. Օրենսդրական միջավայրը:

Գ. Մակարյանի կողմից նշվեց, որ սոցիալական գործընկերության այս եռակողմ հարթակը կարող է նպատակային օգագործվել նշված խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

Նշվեց, որ շուտով նյութը հայերեն և անգլերեն տարբերակներով կհրատարակվի մոտ 3000-4000 օրինակով:

Միաժամանակ, Գ. Մակարյանը տեղեկացրեց, որ ԱՄԿ-ն պատրաստակամ է շարունակելու համագործակցությունն այս ուղղությամբ:

Այնուհետև հնչեցին հարցեր զեկուցողին, իսկ վերջինիս կողմից ներկայացվեցին դրանց պատասխանները, որից հետո Գ. Մակարյանի կողմից, որպես առաջարկ, նշվեց հետևյալը.

միգուցե իմաստ ունի Հանձնաժողովի նախագահի աջակցությամբ, սոցիալական գործընկերների որոշակի թվով ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպել հանդիպում վարչապետի կամ փոխվարչապետի հետ, որի արդյունքում կորոշվեն կողմերի հետագա անելիքները և իրականացվելիք աշխատանքների համապատասխան ուղղությունները:

Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը համաձայնեց նշված առաջարկության հետ և նշեց, որ այդ առաջարկությունը կներկայացվի ՀՀ վարչապետին և միգուցե կազմակերպվի հանդիպում ՀՀ կառավարության աշխատակազմում:

<u>3.</u> «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) ներրկայացրեց

«Օրենսդրության կագավորման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Արմեն Եղիազարյանը:

Նշվեց, որ նախագիծը մշակվել է «Օրենսդրության կագավորման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից: Նախագծով նախատեսվում է.

1) Սահմանել նաև կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանք կիրառելու հնարավորություն.
2) Հանել գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքի տարեկան տևողության սահմանափակումը.
3) Հանել արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի դեպքում վճարվող հավելումների նվազագույն սահմանը և դրա չափի որոշումը թողնել կողմերի բանակցություններին.
4) Հանել ամենամյա լրացուցիչ, ամենամյա երկարացված արձակուրդների սահմանված տևողությունները և սահմանել, որ ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդների տևողությունները, դրանց տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի բանակցությունների արդյունքում և ամրագրվում են աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում: Միաժամանակ ամրագրվում է, որ պետական կազմակերպությունների աշխատողների համար ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդների տևողությունները, դրանց տրամադրման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
5) Սահմանել առանձին աշխատանքների համար տրամադրվող լրացուցիչ և հատուկ ընդմիջումների քանակը, տևողությունը և հանգստանալու տեղը որոշվում է կողմերի բանակցությունների արդյունքում: Նախագծով միաժամանակ սահմանվում է, որ պետական կազմակերպությունների աշխատողների համար լրացուցիչ և հատուկ ընդմիջումների քանակն ու տևողությունը սահմանում է ՀՀ կառավարությունը.
6) Սահմանվում է, որ այն աշխատողներին, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի տրամադրվում է ամենամյա լրացուցիչ արձակուրդ: Միաժամանակ սահմանվում է, որ այդ աշխատողներին վճարվող հավելման չափը որոշվում է կողմերի բանակցությունների արդյունքում և ամրագրվում է աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում:

Նշվեց, որ առաջարկվող փոփոխությունները և լրացումները հիմնավորվում են մի շարք հանգամանքներով: Մասնավորապես. ներկայումս աշխատանքի շուկայում աշխատանքի գինը և պայմանները որոշվում են գործատուի և աշխատողի միջև բանակցությունների արդյունքում: Այսինքն աշխատավարձի չափը թելադրում է շուկան: Այժմ չկա այսպես կոչված ազգային պլանավորում, ինչպես խորհրդային միությունում էր: Նշվեց, որ ներկայումս մեր երկրի էկոնոմիկան կարելի է բնորոշել որպես գործատուի էկոնոմիկա, քանի որ առկա է գործազրկության բարձր մակարդակ, աշխատանքի առաջարկը գերազանցում է պահանջարկին, աշխատանքային հարաբերություններում կա ճնշում գործատուի կողմից:

Այսօր անհրաժեշտություն կա էականորեն ուժեղացնել աշխատողների շահերը ներկայացնող կազմակերպություններին: Դա հնարավոր է իրականացնել նրանց բանակցելու հնարավորություն տալով: Այսօր չգործող սահմանափակումների վերացումը անխուսափելիորեն կբերի արհմիությունների ակտիվացման:

Պետական հիմնարկներում նախագծով նախատեսվող կարգավորումները պետության կողմից սահմանվելու հարցի առնչությամբ Ա. Եղիազարյանի կողմից նշվեց, որ կկազմակերպվեն ինտենսիվ խորհրդակցություններ, քննարկումներ, հաշվի կառնվեն ներկայացված դիտողությունները:

Նախագծի ներկայացումից հետ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ նախագիծը բավական քննարկումներ անցել է և ՀՀ վարչապետի մոտ քննարկման արդյունքներով է որոշվել այն ներկայացնել նաև Հանրապետական եռակողմ հանձնաժողովում և քննարկել սոցիալական գործընկերների հետ: Ա. Ասատրյանն առաջարկեց, եթե կան հարցեր զեկուցողին թող հնչեցվեն:

Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Նախագծով նախատեսվում է օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասում փոփոխություն կատարել՝ ամրագրելով, որ նաև այն դեպքերում, երբ աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի պետք է տրամադրվեն հատուկ ընդմիջումներ: Իսկ եթե հնարավոր է իջեցնել իրավական ակտերով սահմանված մակարդակին, բայց գործատուն չի իջեցնում ապա այդ դեպքում ինչպես պետք է վարվել:
2. Նախագծով հանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատողների համար սահմանված մի շարք երաշխիքների նվազագույն շեմերը և դա թողնվում է կողմերի բանակցությունների արդյունքում կարգավորմանը: Գործազրկության ներկայիս բարձր մակարդակի պայմաններում գործատու-աշխատող բանակցությունները գործնականում անիրատեսական են, նրանք գտնվում են անհավասար պայմաններում:
3. Արտաժամյա աշխատանքը գործող կարգավորումների համաձայն լինում է միայն գործատուի պահանջով: Մինչդեռ նախագծով նախատեսվում է նաև կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանք կիրառելու հնարավորություն: Արդյոք սա նշանակում է աշխատողը կարող է առաջարկել իրականացնել արտաժամյա աշխատանք:

Հնչեցված հարցերին Ա. Եղիազարյանի կողմից տրվեցին հետևյալ պատասխանները.

1. Կատարվում է կոնցեպտուալ փոփոխություն: Գործող կարգավորումը մնացել է խորհրդային ժամանակներից: Ժամանակակից պայմաններում վնասակարության աստիճանը չի կապվում աշխատանքի բնույթի հետ: Այսինքն, սա ենթադրում է աշխատատեղերի սերտիֆիկացում և ըստ դրա որոշում՝ աշխատատեղը վնասակար է, թե ոչ:
2. Իրավիճակն այսօր այնպիսին է, որ օրենքով ամրագրված է մի կարգավորում, իսկ իրականում գործում է այլ բան: Ուստի անհրաժեշտ է, որ ներկա իրողությունը ընդունենք և անենք հնարավոր ամեն ինչ աշխատողների իրավունքները պաշտպանելու համար:

3. Առաջարկվող կարգավորումներով աշխատողին նույնպես հնարավորություն է տրվում իր առաջարկությամբ գործատուի համաձայնության դեպքում արտաժամյա աշխատանք իրականացնելու:

Նախագծի վերաբերյալ Գ. Մակարյանի կողմից նշվեց, որ իրականում նախագծով արհմիությունների համար, որպես բանակցային կողմ, ուժեղանալու հնարավորություն է ստեղծվում, իսկ աշխատողների համար՝ ավել գումար աշխատելու:

Բ. Խառատյանի կարծիքով նախագիծն հիմնականում երկու մոտեցում է ձևավորում.

1. Հեշտացնում է բանակցային գործընթացը, ինչը կարելի է դրական գնահատել: Սակայն, միաժամանակ հարկ է նշել, որ արհմիությունը ներկայումս էլ ունի այդ հնարավորությունը:
2. Նախագծով խտրական վերաբերմունք է դրսևորվում պետական և ոչ պետական ոլորտի աշխատողների միջև: Պետական համակարգի աշխատողների համար իրավաան ակտերով սահմանվում են ինչ-որ նվազագույն դրույթներ, իսկ ոչ պետականի համար ոչ: Առաջանում է հակասություն նույնիսկ ՀՀ Սահմանադրության հետ:

Բ. Խառատյանի կարծիքով այն դեպքում, երբ պետությունը սահմանում է նվազագույն շեմ, հնարավորություն է ստեղծվում շահագրգռելու գործատուներին, որպեսզի վերջիններս հնարավորինս գնան վնասակար պայմանները վերացնելու ուղղությամբ, որպեսզի հնարավորինս սահմանափակեն արտաժամյա աշխատանքը (ինչը ունի թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական հետևանքներ): Այս առումով ՀՀ աշխատանքային օրենսգրքով գործող սահմանափակումները պետք է պահպանվեն և նախագծով ներկայացվող կարգավորումները Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից ընդունելի չեն:

Բ. Խառատյանը նշեց նաև, որ նախագծի վերաբերյալ նախկինում ներկայացված կարծիքներում առարկություններ են ունեցել ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարությունները:

ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարությունների առարկությունների առնչությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ բնական, սովորական իրավաստեղծ գործընթաց է, որի ժամանակ ներկայացվում են նաև առարկություններ և քննարկումների արդյունքում գալիս համապատասխան լուծումների: Անցկացված քննարկումների արդյունքում ներկայումս Հանձնաժողովում պետական կողմի դիրքորոշումը միասնական է և դրական:

Ա. Ասատրյանը նշեց նաև, որ պետական և ոչ պետական ոլորտի աշխատողների համար նախագծով տարբեր կարգավորումներ սահմանելը որևէ խտրական մոտեցում չի պարունակում իր մեջ: Պետությունն այս դեպքում հանդես է գալիս որպես գործատու և իր համակարգի աշխատողների համար սահմանում համապատասխան կարգավորումներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը միաժամանակ նշեց, որ Հանձնաժողովում նախագծի քննարկման արդյունքները ներկայացվելու են ՀՀ կառավարության աշխատակազմ, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացրած դիտարկումները ևս: Բացի այդ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից կարող են ներկայացվել նաև այլ գրավոր հիմնավորումներ, որոնք քննարկման արդյունքների հետ կներկայացվեն ՀՀ կառավարության աշխատակազմ:

Գ. Մակարյանի կողմից ներկայացվեց նաև Հայաստանի գործատուների հանրապետական միության առաջարկությունը նախագծում լրացում կատարելու վերաբերյալ, որը նախօրոք ներկայացված էր եղել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամին: Առաջարկվում է նախագծում ավելացնել նոր հոդված, որով նախատեսվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում «երեսուն» բառը փոխարինել «վաթսուն» բառով: Խոսքը վերաբերում է աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում ծանուցման ժամկետներին: ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործող դրույթի համաձայն աշխատողը իր նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելու դեպքում պարտավոր է գործատուին ծանուցել առնվազն երեսուն օր առաջ: Հայաստանի գործատուների հանրապետական միության կարծիքով այսօր գործատուները լուրջ դժվարություններ են ունենում թափուր աշխատատեղը համապատասխան որակավորում ունեցող մասնագետով համալրելու հարցում:

Գ. Մակարյանի կողմից ներկայացված առաջարկության կապակցությամբ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանն առաջարկեց 5 օր ժամանակ սահմանել կողմերի համար այն քննարկելու և կարծիքները Հանձնաժողովի քարտուղարության միջոցով «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամին փոխանցելու համար:

Ա. Ասատրյանի ներկայացրած առաջարկությունն ընդունվեց ներկաների կողմից:

3.1. Քննարկումների արդյունքում Հանձնաժողովը եկավ այն որոշման, որ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Հանձնաժողովում ՀՀ կառավարության և Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմերը ներկայացնող անդամների կողմից ընդունելի է, իսկ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան դեմ է նախագծին:

Նիստի վերջում Հանձնաժողովի անդամ Է. Կիրակոսյանը սոցիալական գործընկերների ուշադրությունը հրավիրեց հետևյալ հարցին.

Ներկայումս ՀՀ Ազգային Ժողովում է գտնվում հարկային օրենսդրության փոփոխությունների փաթեթը: Բավական դրական փոփոխությունների հետ մեկտեղ կան այնպիսի փոփոխություններ, որոնք ընդունելի չեն, մասնավորապես եկամտահարկի տարբերակված հաշվարկի մոտեցումը:

Գ. Մակարյանը նույնպես նշեց, որ նշված մոտեցումն իրենց կողմից ևս ընդունելի չէ: Թեև փաթեթը նախնական փուլում բավականին ակտիվ քննարկվել է գործատուների ներկայացուցչական մարմինների մասնակցությամբ, սակայն նշված եկամտահարկի տարբերակված հաշվարկի մոտեցում փաթեթում փոփոխվել է քննարկումներից հետ:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Տ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ հարկային օրենսդրության փաթեթի քննարկումներին մասնակցել են և՛ Գ. Մակարյանը, և՛ Է. Կիրակոսյանը:

Քննարկումների արդյունքում աշխատավարձի ագրեսիվ տարանջատման խնդիրը բարձրացվել է Համաշխարհային բանկի մասնագետի կողմից, որից հետո քննարկումները շարունակվել են նաև Արժույթի միջազգային հիմնադրամի հետ: Քննարկումների արդյունքում է ձևավորվել, որ նշված մոտեցումը լավագույն լուծումն է:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ կփորձի ՀՀ Ազգային ժողովի գործընկերներից պարզել, թե հարկային օրենսդրության փոփոխությունների փաթեթի ինչ քննարկումներ են նախատեսվում և ըստ այդմ կկազմակերպվի նաև սոցիալական գործընկերների մասնակցությունը քննարկումներին, որտեղ ներկա կլինեն նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մասնագետներ, ովքեր կներկայացնեն Հանձնաժողովի անդամներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ պարզաբանումները:

Վերոնշյալ առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի անդամների կողմից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**